

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4482

308(47.925)

G-24

1925

3

# ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՐԾԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՉ



Անդրկովկասեան Միութեան Պոլսոյ Ներկայացուցիչ  
Գ. ՇԱՀՎԵՐՏԵԱՆԻ  
Տուած Տեղեկութիւնները

Պ Բ Ա Կ Գ .

Գ Ի Ն 25 Մ Է Ն Թ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ «ԿԻԹԷՄՈՒՐԿ»,  
Կ. Ն. ՄԱԳԱՍՏԵԱՆ ՆԻ ԸՆԿ.  
Կ. ՊՈՒԼՍ 1925

308(47.925)  
Ճ-24

2010

2001



308(47-925)

Ե-24 Այր

41260 - սե.

### ՆՈՐ ԻՐԱԿԱԿԱՐԳԵՐ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ա.

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ


Անոնք որ կ'ապրին Խորհրդային Հայաստանէն դուրս, շատ աղօտ եւ թիւր կարծիքներ ունին Խորհրդ. Հայաստանի մէջ գործող արդարադատութեան եւ արդարադատութիւնը մարմնաւորող օրկաններու մասին:

Վերջին երեք տարիներու ընթացքին գործուած ոճիրներն ու բանտարկութիւնները, որոնց վիճակագրութիւնը պիտի դնենք ստորեւ, կուզան պերճախօսօրէն ապացուցանել որ Խորհրդ. դատական հիմնարկութիւնները իրենց ճկուն, գործնական եւ ժողովրդային հանգամանքովը շատ ւաւելի նպատակայարմար են, քան պուրժուական հաստատութիւնները իրենց պիւրոքրաթական կազմով:

Ներկայիս, Հայաստանի մէջ իբր դատարան կը գործէ ժողովրդական Դատարանը, որ ունի մշտական ժողովրդական մէկ դատաւոր եւ իր շուրջը՝ ժողովրդային երկու ատենակալներ: Այս վերջինները մնայուն չեն, այլ միշտ փոփոխական: Գաւառի Դործադիր Կոմիտէն մէկ տարուան համար որոշ քանակութեամբ ատենակալներ կ'ընտրէ 18 տարեկանէ վեր ընտրողներէ, այսինքն անոնցմէ, որոնք ուրիշի աշխատանքը չեն շահագործեր. ասոնք կարգով տարին իւրաքանչիւրը մէկ շաբաթ կուզան եւ մնայուն դատաւորին հետ կը դատեն: Այս կազմակերպութեան նման կազմակերպութիւն մը կը տեսնուի պուրժուական երկիրներէ ոմանց մէջ, ժիւրի անունով, որոնց անդամները կը կազմեն երդուեալ դատաւոր-

4098

1432



12359-57

2345-60



ները: Բայց մինչ Խորհրդ. երկիրներու մէջ ժողովրդային  
ատենակալը իր վրայ կը մարմնացնէ դատական բոլոր իրա-  
ւասութիւնները, երդուեալ դատաւորները ընդհանրապէս լիա-  
զօր են սահմանափակ հարցերու մէջ, ժիւրիները կ'որոշեն  
թէ ոճիրը գործուած է, ամբաստանեալը ոճրագործ է, կա՞ն  
մեղմացուցիչ պարագաներ:

Այսօր Հայաստանի մէջ կան 21 ժողովրդային դատա-  
րաններ գլխաւոր քաղաքներու եւ գիւղաքաղաքներու մէջ:  
Պէտք է ըսել որ երբ աշխատանքի օրինագրքի մէջ նախա-  
տեսուած յանցանքներով ամբաստանուած է մէկը, անոր դատը  
կը տեսնուի բացառիկ դատարանի մը կողմէ, որ կազմուած  
է ժողովրդային դատաւորէն, Արհեստակցական Միութեան  
եւ Աշխատանքի Ժողովրդային Կոմիսարութեան տեղական  
ներկայացուցիչներէն:

Դատերուն նախնական քննութիւնները ընելու համար  
ժողովրդային դատարաններուն կից կան ժողովրդային քնն-  
նիչներ:

Ժողովրդային դատարաններէն վեր կայ Հանրապե-  
տութեան Գլխաւոր Դատարանը, որ ունի մէկ նախագահը,  
երկու փոխ-նախագահներ եւ վեց անդամ: Ունի երկու բա-  
ժանումներ, քաղաքային եւ պատժական, որոնք իբր նախա-  
դատ ատենա՝ ատենակալներու մասնակցութեամբ կը քննեն  
որոշ գործեր, իսկ նոյն այդ բաժանումները իբր վճռաբեկ  
ատենան, մշտական դատաւորներու կազմով կը քննեն ժողո-  
վրդային դատարաններու տուած վճիռներու դէմ եղած գան-  
գատները:

Հանրապետութեան Վճռաբեկ Դատարանը կը քննէ  
Գլխաւոր Դատարանի վճիռներու դէմ եղած գանգատները եւ  
կը հսկէ ընդհանրապէս հանրապետութեան բոլոր դատարա-  
նական գործին. կազմուած է մէկ նախագահէ եւ երկու ան-  
դամներէ: Ասկէ զատ, Հայաստանի մէջ կը գործէ նաեւ զին-

ուորական ատենան մը, որ ենթակայ է ուղղակի Արդարու-  
թեան Ժողովրդային Կոմիսարութեան:

Դատարաններու մէջ ամբաստանելու եւ Հանրապետու-  
թեան օրէնքներու ճշգրիտ կիրարկումին վրայ հսկելու հա-  
մար կան Պեսական Դատախազներ: Հանրապետութեան  
մէջ կան ընդամէնը 8 դատախազներ:

Գլխաւոր Դատարանին կից կայ պաշտպաններու կամ  
փաստաբաններու կաճառը, որ ունի իր վարչութիւնը մէկ նա-  
խագահով, մէկ փոխ-նախագահով եւ երեք անդամով: Անոնց  
գլխաւոր պարտականութիւններէն մին է կազմակերպել ձրի  
իրաւաբանական օգնութիւն երկրի աշխատաւոր տարրերուն,  
տալով անոնց խորհուրդներ, կազմելով դատական թուղթեր  
եւ այսպէսով պաշտպանել աշխատաւորութեան շահերը: Կա-  
ճառի գործունէութեան վրայ կը հսկէ Գլխաւոր Դատարանը:

Դատաւարութիւններէ վերջ տրուած պատիժներու մէջ  
գլխաւոր տեղը կը բռնէ բանտը կամ ազատութեան օրէնքը:  
Խորհրդային Հայաստանի մէջ այդ կազմակերպութիւնը կը  
կոչուի Ուղղիչ Աշխատակի Տուն եւ ենթադրուած է ներ-  
քին Գործոց Ժողովրդային Կոմիսարութեան: Պուրժուական  
երկիրներու մէջ բանտերը միջոցներ են չարագործը առանձ-  
նացնելու եւ ընկերութիւնը պաշտպանելու ոճիրներէ: Ընկեր-  
վարական տեսակէտով՝ յանցաւորին իրական պատասխանա-  
տուն նոյն ինքն ընկերութիւնն է, իր թերի եւ անարդար  
կազմակերպութեամբ. ուստի բանտերուն նպատակը պիտի  
ըլլայ յանցաւորին տալ այնպիսի միջավայր մը, ուր նա դաս-  
տիարակուի: Ճիշդ այդ նպատակով կազմակերպուած են Հա-  
յաստանի բանտերը: Անոնք յանցաւորներու համար դպրոց-  
ներ եւ աշխատանքի տուններ են: Անոնք իրենց կից ունին  
հողեր՝ մշակելու համար եւ արհեստանոցներ՝ մէջը աշխա-  
տելու համար: Բանտարկեալը կ'աշխատի եւ իր շահած դրամը



կը պահուի իր հաշույն ու երբ բանտէն արձակուի՝ կը տըրուի իրեն: 1923 Փետրվարին, բանտարկեալներու թիւը կը հասնէր 376ի:

Բանտի եւ դատական կազմակերպութեան ենթակայ չեն մանուկ յանցաւորները: Լուսաւորութեան Ժողովրդային Կոմիտարութեան ենթակայ կայ վարչութիւն մը, որ կը կոչուի Մանկան Ընկերային-Իրաւական Պաշտպանութեան Վարչութիւն եւ իրեն ենթակայ յանձնաժողովներով կը քննէ անչափահասներու հասարակականապէս վտանգաւոր արարքները: Այս Յանձնաժողովներուն մէջ ամէնէն շատ գործ ունեցողը եղած է Երեւանի Յանձնաժողովը որ 1923 տարուան ընթացքին ունեցած է 120 դէպք, որոնք յանցանքի տեսակէտով հետեւեալ համեմատութիւնները ունէին.

1. Գողութիւն	68 տեկոս
2. Առանց անցազրի սահմանը անցնիլ	11 „
3. Բռնաբարութիւն	7 „
4. Սպանութիւն	3 „
5. Ուրիշ յանցանքներ	11 „

1921ին, Երեւանի մէջ հիմնուած է յանցաւոր մանուկներու ուղղիչ կրթական գաղութը: Հոս կը հաւաքուին բոլոր գաւառներու յանցաւոր մանուկները, ուր բժշկական եւ կրթական միջոցներով հոգ կը տարուի անոնց: Մեծ տեղ տրուած է աշխատանքին: Անցեալ տարի գաղութը մտած եւ ելած են 163 սան, 24ը անցեալ տարուէն մնացած, իսկ 139ը նոր ընդունուած: Ասոնց 137ը հայեր են եւ 36ը թուրքեր: Ասոնց 136ը որբեր են, 11ը ծնողներ ունին, 11ը միայն մայրեր, 2ը միայն հայրեր:

Այս 163 մանուկներէն, տարուան ընթացքին, իրենց պաշտպաններու հսկողութեան յանձնուած են եւ կամ սեփական աշխատանքի անցած են 113 հոգի: 1923 Հոկտեմբերին, գաղութին մէջ կային 50 սան՝ 10—17 տարեկան:

Գաղութը ունի իր դպրոցը, բանջարանոցը եւ ուրիշ արհեստանոցներ: Սաներէն 45 հոգին կը սորվին զանազան արհեստներ, ինչպէս՝ մեքենավարութիւն, զամբիւղագործութիւն, կազմարարութիւն, կօշկակարութիւն, սափրիչութիւն, խոհարարութիւն եւ շօֆէռութիւն:

Բ.

Օ Ր Է Ն Բ Ն Ե Ր

Ընդհանրապէս Խորհրդ. երկիրներու եւ մասնաւորապէս Խորհրդ. Հայաստանի վերջին յեղափոխութեան իտէալները կը սահմանափակուին ոչ թէ քաղաքական կեանքի զանազան երեւոյթներու փոփոխութեամբ, այլ անոնք կ'ընդգրկեն աւելի լայն ու ընդարձակ հորիզոն մը, իրենց առջեւ ունենալով գոյութիւն ունեցող ամբողջ ընկերային կեանքի կործանման եւ անոնց աւերակներուն վրայ կառուցուելիք նոր իրաւակարգի մը փայլուն հեռապատկերը: Բանդումը կատարուած է արդէն, յեղափոխական ալիքները իրենց առջեւէն մաքրած են հինը. այժմ Խորհրդ. Իշխանութիւնը կը գտնուի իր երկրորդ շրջանին մէջ, այսինքն ընկերային կեանքը նոր ուղիներով վերակազմելու իր աշխատանքին մէջ:

1920 Նոյեմբեր 29ին էր որ Հայաստանի մէջ հռչակուեցաւ Խորհրդ. Իշխանութիւն, որուն գլուխը կը գրտնուէր Հայ Յեղափոխական Կոմիտէն: Նոյն թուին, Դեկտ. 21ին, Կոմիտէն յատուկ հրամանագրով մը Հայաստանի մէջ վերջացած կը նկատէր նախկին բոլոր օրէնքները եւ կեանքի կը կոչէր Խորհրդ. Ռուսաստանի օրէնքները, բնականաբար միջավայրին պահանջած յարմար փոփոխութիւններով: Այդ թուականին, ուրեմն, նախկին կառավարութեան բոլոր վար-



չական, քաղաքական եւ դիւանագիտական հաստատութիւնները ջնջուած կը նկատուէին եւ ամէն իշխանութիւն կմ կեդրոնանար Հայաստանի Յեղափոխական Կոմիտէին ձեռքը:

Փետրվարեան յեղափոխութենէն վերջ երբ այլեւս Խորհրդային Խշխանութիւնը կը կանգնի ամուր կռուանի վրայ՝ կ'սկսի մտածուիլ կարգերու վերակազմութեան մասին: Ապրիլ 2ին գործի կ'անցնի Ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդը եւ Յուլիս 20ի հրամանագրով Խորհրդ. Հայաստանը կը բաժնուի 10 գաւառներու, որոնց իւրաքանչիւրը իր կարգին կը բաժնուի գաւառակներու եւ գիւղերու: Այս հրամանագրին մէջ որոշումներ կը հաղորդուին նաեւ այս բաժանումներուն մէջ գործող յեղափոխական կոմիտէներու մասին:

1922 Փետր. 2ին կը հաւաքուի Հայաստանի բանուորներու, գիւղացիներու եւ կարմիր բանակայիներու համագումարը, որ գծեց եւ ձեւակերպեց Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան սահմանադրութիւնը, ընտրուեցաւ Կեդր. Գործադիր Կոմիտէ մը, որ կը ներկայացնէ երկրին բարձրագոյն իշխանութիւնը, սահմանադրութիւնը կը գծէ խորհուրդներու եւ գաւառական իշխանութեան փոխ-յարաբերութիւնները, կը վերցուին ռազմական-դատական մարմինները եւ անոնց տեղը կ'անցնին սահմանադրական իրաւական նոր մարմիններ:

Պետութիւնը կը կազմակերպուի եւ կը հիմնուի երկրին մէջ գտնուող բանուորներու, զինուորներու եւ գիւղացիներու վրայ: Այս երեք տարրերը Խորհուրդներ կը կազմեն գաւառներու մէջ, անոնց կողմէ ընտրուած պատգամաւորներով կը կազմուի Խորհուրդներու համագումարը, որմէ կը բղխի երկրին օրէնսդրական եւ վարչական կազմը: Պուրժուական երկիրներու Բարլամէնթը, Խորհրդ. երկիրներու մէջ կը փոխարինուի Խորհուրդներու Համագումարով:

Հայաստանի ամբողջ սահմաններուն մէջ պետական լեզուն հայերէնն է, իսկ թրքաբնակ վայրերու մէջ հայերէնին կից կայ թուրքերէնը:

Հանրապետութեան մէջ բոլոր ազգութիւններու պատկանող մշակութային կրթական հաստատութիւնները (դպրոց, թանգարան, մատենադարան եւլն.) պետականացած են:

Կրօնքը խղճի գործ է, պետութիւնը կ'անջատուի եկեղեցիէն եւ կրօնքը դպրոցէն: Խիղճը ազատ է: Դպրոցներու մէջ արգիլուած է ո՛ր եւ է կրօնական դասաւանդութիւն:

Այս ժամանակ արդէն սկսած էր տնտեսական նոր քաղաքականութիւնը. ուստի անցած էր բռնագրաւումներու շըրջանը եւ պետութիւնը թեւակոխած վերաշինութեան շրջանի մը մէջ: Անհրաժեշտ էր մէջտեղ բերել քաղաքային օրէնքներ, որոնք պիտի կառավարէին անհատներու՝ իրարու հետ եւ պետութեան՝ անհատներու հետ ունեցած յարաբերութիւնները: Այս խնդրոյն մէջ պետութիւնը առաջնորդուած է միշտ երկիրը վերականգնելու ամենաբարձր իտէպով: Ուստի չափով մը ազատ թողուեցան մասնաւոր նախաձեռնութիւնները մանր առեւտուրի եւ արդիւնաբերութեան մէջ: Ետ դարձուեցան ազգայնացած ջրաղացներ եւ ուրիշ հաստատութիւններ: Տէրերու իրաւունքը վերահաստատուեցաւ իրենց տուններուն վրայ: Պետական մենաշնորհ դարձաւ մեծաքանակ առեւտուրը եւ արտադրութիւնը: 1922 Յուլիս 22ի հրամանագրով կառավարութիւնը հիմնական կերպով ճշդեց քաղաքային օրէնքի սահմանները այսպէս.

1) Անհատական սեփականութիւնը սահմանափակ ծաւալով կը թոյլատրուի ոչ թէ իբրեւ անձնական իրաւունք, այլ իբրեւ ընկերային գործառնութիւն:

2) Մասնաւոր իրաւական յարաբերութիւնները հասարակական իրաւունքի բնոյթ կը կրեն:



Ըստ մշակուած քաղաքային օրինագրքին, Հայաստանի մէջ կը ճանչցուի երկու տեսակ սեփականութիւն. 1) Պետական, 2) Անհատական: Վերջնականապէս անհատական սեփականութեան առարկայ ըլլալէ կը դադրին հանքերը, շուրերը, երկաթուղիները՝ իրենց կազմածով եւ հողը: Անհատները իրաւունք ունին իրենց պէտքին համեմատ հողը մշակելու: Ոչ ոք իր մշակած հողը իրաւունք ունի ուրիշի մը ծախելու: Ընդունուած է իր մշակելու իրաւունքը ժառանգորդին ձգելու սկզբունքը:

Փոքր եւ միջին արդիւնաբերութիւնը զարգացնելու եւ այդ նպատակով մասնաւոր նախաձեռնութիւնը քաջալերելու համար մասնաւոր սեփականութիւն կրնան ըլլալ չազգայնացուած եւ սահմանափակ թուով բանւորներ ունեցող առեւտրական եւ արդիւնաբերական ձեռնարկները, արդիւնաբերական գործիքներն ու միջոցները, այսինքն Հայաստանի մէջ բնակող եւ կամ Հայաստան գացող ամէն անհատ իրաւունք ունի ունենալու այն բոլոր գործիքները եւ զանազան տեսակի մեքենաները, որոնք պէտք են իրեն, իր արհեստին կամ արդիւնաբերական ու եւ ձեռնարկի մէջ: Ազատ է նոյնպէս ունենալու արժեթուղիներ, թղթադրամներ ամէն տեսակի, տնային գործածութեան համար անհրաժեշտ եղող բոլոր առարկաները եւ անոնց գործածութիւնը մասնաւոր օրէնքով չարգիլուած պիտոյքները:

Հեռագիր, ռատիօ եւ ուրիշ կարգ մը ձեռնարկութիւններ մասնաւոր սեփականութիւն կրնան ըլլալ մի միայն պետական զիջումներով:

Քաղաքային օրինագիրքը սեփականութեան իրաւունք կուտայ շինարարական աշխատանքով ձեռք բերուած արդիւնքի մը: Եթէ մէկը կամ մէկ քանիներ ճահիճը չորացնելով, մշակելի հողի կը վերածեն, որոշ ժամանակով իրաւունք կ'ստանան օգտագործելու այդ հողը:

Ընդունուած են նաեւ ժառանգութեան, կտակի իրաւունքի, գրաւի, 10,000 ոսկի ըուպլի արժէքով մուրհակի, եւլն. ի իրաւական հիմքերը:

Քաղաքային օրինագիրքը կը խօսի նաեւ առեւտուրի երաշխաւորութեան, ընկերակցութիւններու եւ ուրիշ հաստատութիւններու մասին:

Պատժական օրէնսդրութիւն չկար Հայաստանի մէջ, մինչեւ 1922 Յուլիս 23ը: Տարիներու պատերազմը, ժողովուրդին ազատութիւնն ու թշուառութիւնը իսլած էին ժողովուրդէն բարոյական ամէն տոկոսնութիւն: Ոճիւրները բազմացած էին, ժողովուրդին մեծամասնութիւնը ընդունակ էր ոճրագործութեան: Այս պայմաններու տակ յեղափոխական դատաւորին անհատական ըմբռնումն ու խիղճն էր որ կը բռնէր օրէնքին տեղը եւ առաջնորդ կը հանդիսանար իրեն: Երբ պէտք տեսնուեցաւ օրէնքի, Յեղափոխական Ռուսաստանի փորձառութիւնը եկաւ թանկագին աջակցութիւն տալ Խորհրդային Հայաստանի օրէնսդրութեան:

1922 Յուլիս 23ին, Հայ Կեդր. Գործ. Կոմիտէն կազմեց պատժական օրինագիրքը, փոխ առնելով Ռուսաստանի օրինագրքէն, միայն կարգ մը փոփոխութիւններով, համաձայն երկրին ինքնուրոյն պայմաններուն:

Ինչպէս առաջ, հիմա եւս ընտանիքը յայտարարուեցաւ ընկերային կազմակերպութիւն մը՝ հիմնուած ազատ սիրոյ սկզբունքին վրայ, ընդունուեցաւ կնոջ ազատութիւնն ու հաւասարութիւնը ընտանիքէն ներս եւ դուրսը՝ հանրային պաշտօններու մէջ:

Ամուսնութիւնը իբրեւ ընկերային երեւոյթ՝ ենթարկուեցաւ պետութեան ամենախիստ հսկողութեան: Պարտաւորիչ դարձաւ քաղաքական ամուսնութիւնը: Ամուսնութիւնը կընքուած կը նկատուի, երբ այր եւ կին պետութեան պաշտօն-



եային առջեւ կը յայտարարեն իրենց հաւանութիւնը: Կրօնական պսակը կամաւոր է եւ ձգուած է ամուսնացողներու ազատ ըմբռնումին: Ամուսնութիւնը յաւիտենական չէ, այր եւ կին որոշ պայմաններով կրնան բաժնուիլ իրարմէ, երբ այդ կը պահանջէ իրենց երջանկութիւնը:

Ասոնցմէ զատ, ներկայիս Հայաստանի մէջ կան քաղաքային դատավարութեան եւ պատժական դատավարութեան, հողային, աշխատանքի, անտառային եւ անասնաբուժական օրինագրքեր:

## ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ա.

### Ա Շ Ա Կ Ե Ր Տ Ն Ե Ր Ը

Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը իր ամենալայն ուշադրութեան առարկան ըրած է Հայաստանի լուսաւորութեան հարցը: Այս մասին իբր փաստ կը բաւէ միայն ըսել որ երկրին պետական ամբողջ պիտոճէին 40 տոկոսը յատկացուած է լուսաւորութեան գործին:

Այն սկզբունքները, որոնք կը ղեկավարեն Հայաստանի կրթական գործը, կը բղխին մանկավարժութեան եւ ընկերային գիտութեան ամենավերջին ըմբռնումներէն, որոնք կարելի է խտացնել քանի մը խօսքով իրենց էական կէտերուն մէջ: Ա) Ընդունիլ որ դպրոցին եւ դաստիարակութեան նպատակն է մանուկը պատրաստել կեանքի պայքարին, յարմարցնելով զայն իր միջավայրին: Այս նպատակով մանուկը առաջին օրէն իսկ շփման մէջ դնել իր ֆիզիքական միջա-

վայրին, հողին, ջուրին ու քարին հետ՝ ներշնչելով անոր անձնապէս դիտելու, քննելու ուղղութիւնը: Բ) Ընդունիլ որ դասերու եւ դաստիարակութեան ուղղութիւնը պէտք է բղխի ուղղակի աշակերտին միջավայրէն, ինչ որ դուրս կը մնայ անոր միջավայրի պահանջէն, այդ ինքնին կը մտնէ տեսականի սահմանին մէջ եւ անօգուտ է: Երկրագործական միջավայրի մը մէջ դաստիարակութեան ուղղութիւնը պէտք է ըլլայ մանուկին ուշադրութիւնը դարձնել դէպի երկրագործութիւնը: Ճարտարարուեստական շրջանի մը մէջ մանուկը պէտք է պատրաստել ճարտարարուեստական կեանքի, մէկ խօսքով՝ մանուկը պէտք է պատրաստել իր միջավայրին համար: Գ) Ընդունիլ որ կրթական հաստատութիւններու աստիճանաչափը պէտք է համապատասխան ըլլայ տուեալ երկրի մը ժողովուրդին մտաւոր զարգացման աստիճանին: Ժողովուրդ եւ դպրոց պէտք է երթան զուգընթաց: Ժողովուրդ եւ մտաւորականութիւն պէտք է գիրար լրացնեն: Երկրի մը զարգացման բնականոն ընթացքը կը խանգարուի, երբ այս երկու շերտերը՝ մտաւորականութիւն եւ ժողովուրդ կը կորսնցնեն իրենց զարգացման համեմատական աստիճանը: Դ) Ընդունիլ որ աշխատաւոր ժողովուրդին համար կենսական անհրաժեշտութիւն են նախակրթարանները, աշխատաւորութիւնը միայն մինչեւ որոշ տարիք կրնայ իր զաւակը դպրոց դրկել, անկէ վերջ պէտք է պատանին սկսի աշխատանքի՝ ապրուստ ճարելու համար: Իսկ աշխատաւոր տարրին վրայ յենուած կառավարութիւն մը ամէն բանէ առաջ պարտաւոր է ունենալ լաւագոյն նախակրթարաններ, ուր դաստիարակուին աշխատաւորութեան զաւակները:

Ահա այս գլխաւոր սկզբունքներն են որ ուղղութիւն կուտան Խորհրդ. Հայաստանի Կառավարութեան՝ իր կրթական գործին մէջ: Դպրոցական գործին հսկելու համար լու-



սաւորութեան ենթակայ կայ ընկերային դաստիարակութեան ընդհ. վարչութիւն մը, որուն յանձնուած է դպրոցներու վերին հսկողութիւնը, մանուկներու բնկերային պաշտպանութիւնը եւ ուսուցիչներու զարգացման օժանդակելու գործը:

1922—23 ուս. տարին, Հայաստանի մէջ կային պետական եւ տեղական ընդամենը 10 մանկապարտէզ 1067 աշակերտներով, 37 կարգով եւ 47 աշխատակիցներով: Ասկէ զատ, Ամեր. Կայստամատոյցը ունէր 38 կարգ 1 28 աշակերտով եւ 41 աշխատակիցներով. իսկ Երկաթագծի մանկապարտէզներուն մէջ կային 5 կարգ 5 ուսուցիչով եւ 140 ուսանողներով: Ընդհանուր գումարն է 293 աշակերտ, 80 կարգ եւ 93 աշխատակից: Ինչպէս կը տեսնուի, մանկապարտէզներու քանակը Հայաստանի մէջ չափէն աւելի քիչ է: Բայց նկատի պէտք է ունենալ որ մանկապարտէզի աշխատանքները սկսած են Հայաստանի մէջ խորհրդայնացումէն վերջ, անկէ առաջ մանկապարտէզը հազուադէպ երեւոյթ էր. 1923—24 դպրոցական տարեշրջանին, Էուսաւորութեան Կոմիսարութեան պիւտճէին մէջ աւելի ընդարձակ տեղ տրուած է մանկապարտէզներու:

Դպրոցները երեք աստիճանի բաժնուած են Խորհրդ. Հայաստանի մէջ. 1) Զորսամեայ. 2) Երկամեայ. 3) Բ. աստիճանի դպրոց: Ա. աստիճանի դպրոցներու թիւը ամբողջ Հայաստանի մէջ կը հասնէր 547ի, 1748 կարգերով եւ 69,138 աշակերտներով, որոնց 42,028ը մանչ, իսկ 26,110ը աղջիկ: Ամբողջ Հայաստանի մէջ կան 1103 բնակավայր. ուրեմն դպրոց կայ միայն այս բնակավայրերուն 46,5 տոկոսին մէջ, փոքր գիւղերու մէջ դպրոց չկայ: (\*)

Եթէ Հանրապետութեան բնակչութեան միայն 200,000ը հաշուենք 7—16 տարեկան, ապա ուրեմն տղայոց 35,5 տոկոսը միայն դպրոց կը յաճախեն: Եւ ասիկա Հայաստանի

մէջ ամենայաջող շրջանն է: Դաշնակցութեան օրով, միայն 1919—20 թուին դպրոցական կանոնաւոր շրջան եղած է եւ այդ տարին դպրոցներու թիւը 476 էր 45,251 աշակերտներով: Այս թիւին մէջ են Սուրմալուի եւ Դարսի 83 դպրոցները: Պատերազմէն առաջ, 1914ին, Երեւանի նահանգին մէջ բոլոր պետական-հասարակական եւ մասնաւոր դպրոցներու քանակը եղած է 347 հատ 21,511 աշակերտներով:

Բ. աստիճանի դպրոցներու թիւը 10 է 50 կարգով եւ 1300 աշակերտներով:

Ուրիշ վիճակագրութիւն մը եւս: 1923—24 դպրոցական տարուան Յունվար 1ին տեսնուեցաւ որ Լուս. Ժողովրդային Կոմիսարութեան դպրոցներուն մէջ կային 56,000 ուսանողներ. (\*) Ապրիլին կատարուած վիճակագրութեամբ աշակերտութեան թիւը իջած էր 48,771ի. պակսած 7,200 աշակերտները ժողովուրդի չքաւոր դասին կը պատկանէին, որոնք դպրոցը կանոնաւորապէս շարունակելու միջոց չունին, իւրաքանչիւր տարի հազիւ քանի մը ամիս դպրոց կը յաճախեն: Իրենց ազգութեան նայելով, աշակերտները կը բաժնուին հետեւեալ համեմատութեամբ.

Ազգութիւն	Թիւ	Տոկոս	Դպրոց	Տոկոս
Հայ	44724	91,7	484	85,5
Թուրք	1521	3,2	42	7,6
Ռուս	1739	3,3	24	4,2
Եզիտի	267	0,55	7	1,2
Յոյն	228	0,45	4	0,7
Ասորի	196	0,4	5	0,8
Այլ	39	—	—	—
	<u>48771</u>	<u>100%</u>	<u>566</u>	<u>100%</u>

(\*) Ծանօթ.— Այդ թիւը 1925ին բարձրացած է 78,000ի: Ասոր մէջ չեն անդրադարձուցներու, անհասական հաստատութիւններու աւակերտները:

(\*) Ծանօթ — 1925ին դպրոցներու թիւը բարձրացած է 749ի:



Այս թիւին մէջ չեն Ամերիկեան Նպաստամատոյցի որբանոցները :

Աշակերտը իր անմիջական միջավայրին հետ յարաբերութեան դնելու աշխատանքները յամառօրէն առաջ կը տարուին բոլոր դպրոցներու մէջ : Արդէն Ա. աստիճանի դպրոցները յարմարցուած են իրենց միջավայրին . գիւղերու մէջ գտնուող 522 դպրոցները ունին գիւղատնտեսական հակումներ , իսկ քաղաքի 44 դպրոցները՝ արհեստագիտական : Առաջիններուն մէջ դաստիարակութիւնը կը ձգտի մանուկին ուշադրութիւնը կեդրոնացնել գիւղատնտեսական զանազան հարցերու շուրջ , գործնական կերպով ցոյց տալով՝ անոր երկրագործութեան շատ մը երեւոյթները : Երկրորդ կարգի դպրոցներուն նպատակն է աշակերտը ծանօթացնել արհեստագիտական եւ մեքենագիտական սկզբունքներուն : Այս ուղութեամբ մեծ դեր կը կատարեն աշակերտական արշաւախումբերը : Իւրաքանչիւր դպրոց գրեթէ պարտադիր՝ տարեկան մի քանի արշաւախումբ կը կազմակերպէ դէպի այն քաղաքներն ու վայրերը , որոնք յատկանշական են կամ իրենց գիտական , արտադրողական ցանցով եւ կամ պատմական հնութիւններով : Նոյն իսկ արշաւախումբեր կազմուած են Հայաստանէն դուրս , դէպի դրացի հանրապետութիւնները :

Դպրոցական դաստիարակութեան նպաստած են նաեւ ակումբային կազմակերպութիւնները : Բ. աստիճանի դպրոցներու բոլոր վերի կարգերը , համաձայն իրենց ցանկութեան , կազմած են գիտական կամ գրա—զեղարուեստական խումբեր : Այս շարժումին շնորհիւ բոլոր դպրոցներու մէջ ինքնաբերաբար տարածուեցաւ դպրոցական թերթեր հրատարակելու փափաքը : Շաբաթական մէկ օր յայտարարուած է ազատ աշխատանքի օր . այդ օրուան մէջ աշակերտները կ'զբաղուին թատերական ներկայացումներով , հանդէսներով եւ ակումբային գործերով :

Դպրոցական կարգապահութեան խնդիրը ուսուցչին առջեւ դրուած կարեւոր հարցերէն մէկն է . Հայաստանի մէջ այս հարցին կը մօտենան աշակերտին մէջ ինքնագիտակցութիւն արթնցնելու ուղիով : Աշակերտները դրուած են ինքնավարութեան դրութեան մէջ : Կ'ունենան իրենց վարչական եւ թատերական , առողջապահական եւ աղքատ ուսանողներու օգնող բաժանումներ : Դպրոցական ինքնավարութիւնները դրուած են Երիտասարդական Միութեան եւ պատանեկան կազմակերպութիւններու ղեկավարութեան տակ :

Պատանեկան շարժումը առաջին անգամ երեւան եկաւ դպրոցներու մէջ եւ ապա սկսաւ ծաւալիլ դպրոցէն դուրս , քիչ ժամանակի մէջ իր մէջ առնելով բոլոր աշխատաւոր պատանիները : Այս կազմակերպութիւնը դպրոցէն ներս եւ դպրոցէն դուրս կը գործէ իր ֆիզիքական եւ մտաւորական ուղղութեամբ . անցեալ տարի այս կազմակերպութիւնը երեւան բերաւ համահայկական առաջին հոկտեմբերեան խաղերը : Շարժումը նկատի առնելով Խորհրդ. երկիրները , առաջին անգամ երեւան եկաւ Հայաստանի մէջ , որմէ վերջ ծաւալեցաւ նաեւ Միութեան միւս մասերուն մէջ :

Ամբողջ Հայաստանի դպրոցական գործին ուղղութիւն տալու համար Երեւանի մէջ հիմնուած է Կեդրոնական Փորձնական Դպրոց մը եւ Կեդրոնական Մանկավարժական Թանգարան մը : Դպրոցը ունի գիւղատնտեսական հակում եւ իր քով կան իր այգին , կովերն ու կենդանիները եւ փոքրիկ արհեստանոցը : Դպրոցը ունի իր գրադարան—ընթերցարանը , կօօպէրաթիվը , խոհանոցը , եւ ասոնք բոլորը միացած գոմին եւ այգիին հետ , տղուն դաստիարակութիւնը կը կապեն իր աշխատանքին :



Խորհրդային Հայաստանի ուսուցչութիւնը ոչ իր որակով եւ ոչ ալ իր քանակով դեռ չէր հասած պահանջուած աստիճանին: 1922—23 տարին, ուսուցչութեան քանակն էր 1274, որոնցմէ 133ը բարձրագոյն կրթութեամբ, 656ը միջնակարգ եւ 48ը միջնակարգէն ցած: Ասոնցմէ 779ը այդ, իսկ 495ը կին: 1923—24 տարին տեղի ունեցաւ զտում եւ միջնակարգ դաստիարակութիւն ունեցողներու թիւը աւելցաւ ի վնաս աւելի ցած աստիճանի դաստիարակութիւն ունեցողներու:

Ուսուցչութեան աշխատանքը անցեալ տարի եղաւ շատ ծանրաբեռնուած. 1274 ուսուցիչներէն 542ը ունեցած են երկու դասարան եւ անոնցմէ շատեր օրական աւանդած են 6—8 ժամ: Այս ծանր աշխատութեան հետ համեմատած, իր ջնջին ամսականը պատեհութիւն չէ տուած ուսուցչին ունենալ բաւարար չափով ինքնազարգացում, որով եւ տուած է նաեւ դպրոցին մէջ մեթոտները կիրարարելու աշխատանքը: 1923—24 տարուան համար ուսուցչի տնտեսական դրութիւնը սկսաւ դրուիլ որոշ, տանելի պայմաններու մէջ. ամսականները սկսան վճարուիլ ոսկի թուպլիով եւ նուազագոյն սակ նշանակուեցաւ 25 ոսկի թուպլին: Այս տարի ուսուցիչներու պահանջը շատ աւելի է. նախ որ կան անցեալ տարուան 524 դասարանները, որոնք թափուր մ'նացած էին եւ երկու դասարանը մէկ ուսուցչի յանձնուած էր. ասկէ զատ, 400 նոր դասարաններ եւս կը վերաբացուին արդէն գոյութիւն ունեցող դպրոցներու մէջ: Այս տարի կայ

Ծանօթ. — 1925ին այդ թիւը հասած է 2334 ի:

նաեւ նոր դպրոցներու հարցը. գիւղացիները շինած են դրպրոցական շէնքեր եւ կ'սպասեն որ բացուին իրենց համար դպրոցներ եւ սյսպէսով ծաւալի դպրոցներու ցանցը:

Ուսուցչութեան որակը բարձրացնելու համար ընկերային դաստիարակութեան վարչութիւնը ձեռք առած է կարգ մը միջոցներ: Բացուած են ամառնային մանկավարժական դասընթացքներ: Այս դասընթացքները սկսան 1924ին եւ բացուեցան Տիլիճանի, Նոր Պայազիտի եւ Ղարաքիլիսէի մէջ, ուր կը յաճախէին 1,0 ուսուցիչ: 1922ին, այդ դասընթացքները բարձրացան վեցի՝ 400 ուսուցիչ եւ ուսուցչուհիներով: 1923ին, կրկին վեցով շարունակուեցան եւ դասախօսուեցան քաղաքական գրագիտութիւն, խորհրդ. սահմանադրութիւն, աշխատանքի դպրոցի տեսութիւն, տնտեսական աշխարհագրութիւն, դպրոցավարութիւն, մայրենի լեզու, բնագիտութիւն եւ մաթեմատիքի մեթոտներ, ընդհանուր գիւղատնտեսութիւն, մեղուաբուծութիւն, անասնապահութիւն, կաթնատնտեսութիւն եւ հնագիտութիւն:

Այս դասընթացքները յաճախող ուսուցիչներու տարիքը 20-30 եղած է մեծ մասամբ, ընդհանրապէս 1-5 տարի ուսուցչութիւն ընողներ:

Այս ձեռնարկներէն զատ, 1922ին բացուած է մանկավարժական հաստատութիւնը եւամեայ դասընթացքով եւ ուսուցիչ հասցնելու նպատակով: Հաստատութիւնը ունի հետեւեալ ծրագիրը.

1.— Բնագիտական-մաթեմատիքական	63 ժամ
2.— Հասարակագիտական	48 „
3.— Մանկավարժական	46 „
4.— Արուեստ	18 „
5.— Գիւղատնտեսական	13 „
6.— Ֆիզիքական կրթութիւն	6 „
7.— Արհեստ	7 „

4092  
12345-60





1923-24ին կային երկու կարգեր միայն, ընդամենը 73 աշակերտներով: Դասախօսներու թիւը 14 էր: Գործնական փորձերը տեղի կ'ունենան հաստատութեան սեփական քիմիանոցի եւ ֆիզիքանոցի մէջ: Ատաղձագործական արհեստանոցին մէջ ուսանողները կը կատարեն գործնական աշխատանքներ: Զբաղումները կ'սկսին կէսօրէն յետոյ:

Դպրոցական գործին յառաջդիմութեան արգելքներէն մէկն ալ շէնքերու եւ գոյքերու պակասը եղած է:

Պատերազմի ժամանակ, զօրքերը եւ տեղացիները այրած ու ոչնչացուցած են ամբողջ դպրոցական գոյքերը, նոյն իսկ շէնքերը, եւ ասոնք երեք տարուան ընթացքին՝ ջնջին չափով վերականգնած են: Ծէնքերու նորոգութիւնը միայն կը կարօտի 100,000 ռուբլի, որու ջնջին մէկ մասը միայն տրամադրուած է Կոմիսարութեան, եւ այդ գումարով վերականգնուած են Երեւանի եւ գաւառի մէջ կարգ մը շէնքեր: Ընդհանրապէս դպրոցի յատուկ առողջապահական շէնքերու պակասը զգալի է ամբողջ Հայաստանի մէջ: Նոյնքան տխուր պատկեր մը կը ներկայացնէ նաեւ գոյքերու պակասը: Անցեալ տարի Հայաստանի մէջ կային 10,317 նստարան, որոնց վրայ կարող է նստիլ աշակերտներու 2,5ը, կը պակսէր 14,019 նստարան: Կար 687 գրատախտակ՝ կը պակսէր 1,100: Անցեալ ամառ շինուեցաւ 4 քաղաքներու մէջ 1,00 նստարան, մօտաւորապէս 10,000 կարօտութեան դէմ: Աշակերտները շատ անգամ դասարանին մէջ կանգնած են կամ պատին յենած կամ գետինը նստած եւ կամ գերանները կը գործածեն իբր նստարան:

Վառարանի, պահարանի եւ դարակներու խօսքն իսկ չըլլար:

Շատ հազուադէպ են գիտական քարտէսներ եւ կամ գործիքներ: Մէկ քանի դպրոցներու մէջ միայն այս տարի

սկսաւ գրադարանի կազմակերպումը: Միայն Լոռիի, Վարաքիլիսէի, Տիլիճանի, Էջմիածնի եւ Լէնինականի լուսաւորութեան տեղական մարմինները Մոսկուայէն եւ Թիֆլիսէն ֆիզիքի եւ քիմիայի վերաբերեալ գործիքներ ձեռք ձգած են եւ այսպէսով դասաւանդութիւնը փոփոխութիւն կրած է այդ շրջաններուն մէջ:

Ամէն տեղ զգալի է մանկական դրադարաններու պակասը, այնպէս որ աշակերտութեան մէջ շատ քիչ չափով կարելի եղած է արթնցնել ընթերցանութեան փափաքը: Այս պակասը գէթ մասամբ լրացնելու համար Կոմիսարիատը ձեռնարկած է "Պատկոմ" անունով պատանեկական լրագրի հրատարակութեան:

Այս թերիները լրացնելու համար Կոմիսարութիւնը մեծ ջանքեր կը թափէ: Հայաստանի մէջ դպրոցները ունին իրենց սեփական հողերը, որոնք կը մշակուին մասնաւոր մարմիններու հսկողութեան տակ եւ տղաքը իրենք կը տանին գլխաւոր աշխատանքները: Անցեալ տարի ո՛չ միայն հացահատիկի, այլեւ բամբակի մշակութեամբ զբաղած են դպրոցական տղաք. ուրիշ տեղեր նաեւ շերամաբուծութեամբ: Այս հողերէն առաջ եկած արդիւնքով շինուած են ու նորոգուած դպրոցական շէնքեր. իսկ այս տարի որոշուած է որ նոյն հասոյթը գործածուի դպրոցական գոյքերու կազմակերպման: Խիստ մօտաւոր ապագայի մէջ, շնորհիւ ձեռք առնուած իմաստուն միջոցներու եւ ժողովուրդին եւ ուսանողութեան մէջ առաջ եկած փոխադարձ օգնութեան եւ հաւաքական աշխատանքի կազմակերպման, Հայաստանի մէջ պիտի ունենանք լուսաւորութեան լաւագոյն վառարանները:



## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸ Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԹԱՆԳԱՐԱՆ, ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԵՒ ԹԱՏՐՈՆ

Գիտենք որ Խորհրդային Հայաստանը վարչականօրէն մէկ մասն է Խորհրդ. Հանրապետութիւններու Միութեան : Այս Միութիւնը կազմուած է Միութեան սահմանին մէջ ապրող ազգերու եւ ժողովուրդներու ազատ եւ համերաշխ գործակցութեամբ : Միութեան մէջ գտնուող իւրաքանչիւր ժողովուրդ ոչ միայն ազատ է իր ներքին կեանքին տալու իր ցանկացած ուղղութիւնը, այլեւ Միութեան իրաքանչիւր միաւորը ազատ է Միութեան մէջ մտնել եւ կամ բաժնուիլ անկէ, եթէ այդ կը պահանջէ իր տնտեսական եւ քաղաքական շահերը : Ուրիշ խօսքով՝ Խորհրդ. Հանրապետութիւններու Միութիւնը կանգնած է ազգերու ինքնորոշման սկզբունքին վրայ :

Ազգի մը ինքնորոշման սկզբունքը ամէնէն շատ ի յայտ կու գայ իր մշակութային կեանքին մէջ, եւ Խորհրդ. Հայաստանի Կառավարութիւնը, որու գոյութիւնն իսկ արդիւնք է ազգերու ինքնորոշման սկզբունքին, չէր կրնար անտարբեր մնալ հայ մշակութային կեանքին հանդէպ : Այսօր Խորհրդ. Հայաստանի մէջ նոր զարգացումն ու յառաջդիմութիւնը երբեք այնքան ցայտուն ու որոշ չէ, որքան իր հայեցի մշակոյթով, իր թանգարաններով, մատենադարաններով, թատրոններով, դպրոցներով ու գրականութեամբ : Մօտաւոր անցեալի մը մէջ, երբեք Հայաստանը չէր ճոխացած հայ սնցեալ ու ներկայ զարգացումը ցոլացնող այսօրվան բազմապիսի երեւոյթներով . եւ այս բոլորը շնորհիւ

Խորհրդ. Հայաստանի ներկայ վարիչներուն, որոնք խընդրոյն կը մօտենան գիտակցօրէն եւ գերմարդկային ճիգեր կը թափեն, ոչ միայն զարգացնելու ներկան, այլեւ աւերակնէրու մէջէն երեւան բերելու անցեալը իր բոլոր շքեղութեամբ

Հայաստանի մշակութային կեանքի ղեկավարութիւնը յանձնուած է առանձին Կոմիսարութեան մը, որ կը կոչուի Լուսաւորութեան Ժողովրդային Կոմիսարութիւն : Կոմիսարութեան ենթակայ են 8 վարչութիւններ :

Այս վարչութիւններէն մէկն է Ակադեմական Կեդրոնը, որուն պարտականութիւնն է վարել թանգարաններու, մատենադարաններու եւ թատրոններու յատուկ գործերը :

*Երեւանի Հանրային Մատենադարան*. — Այս մատենադարանը բացուած է պաշտօնապէս 1922ին : Հիմը դրուած էր 1919ին եւ Թիֆլիսի մէջ գնուած էին այն զըրքերը, որոնք այսօր գրադարանի գլխաւոր հարստութիւնը կը կազմեն : Գրադարանը բաղկացած է Ն. Արղւութեանի 9000 ռուսերէն եւ ֆրանսերէն գրքերէն, Վ. Ղորղանեանի 4500 հատորէն եւ Թիֆլիզի ակումբի գրադարանէն, որ մինչեւ Հայաստան գալը՝ արդէն կողպտուած էր : Ասոնցմէ զատ, զանազան անձերէ նուէր ստացուած եւ գնուած են ուրիշ շատ մը գիրքեր : Ասոնք բոլորը մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը կը մնային Թիֆլիս, որովհետեւ Վրաց Մէնշէվիք կառավարութիւնը թոյլ չէր տար անոնց Հայաստան փոխադրութիւնը : Այս երկու երկիրներու խորհրդայնացումէն վերջ հնարաւոր եղաւ այդ գիրքերը փոխադրել Հայաստան . բայց անոնք ամիսներով մնացին Երեւանի կայարանը, որովհետեւ տեղաւորելու համար պատրաստ տեղ չկար : 1922 Օգոստոս 15ին սկսան շէնքի մը նորոգութիւնները, միեւնոյն ժամանակ հնարաւոր չափով առաջ գացին գրքերու դասաւորումն ու տեղաւորումը . շինուե-



ցան գրասեղան, նստարան եւ այս բոլորին ծախքը հոգացուած է մասամբ Հայաստանի Օգնութեան Կոմիտէի կողմէ, 4000 ոսկի ըուպլի:

Գրադարանի գրքերու ընդհանուր քանակը կը հասնի 50,000 հատորի, ուր մասնաւոր ուշադրութիւն կը գրաւէ Ռուսաստանի եւ արտասահմանի մէջ հրատարակուած գրքերուն չգոյութիւնը: Մասնաւորապէս աղքատ է հայկական բաժինը:

*Պեսակաւ Կեդրոնական Թանգարան.*— Այս թանգարանին հիմ ծառայած է Հայոց Ազգագրական Ընկերութեան Թիֆլիսի մէջ ունեցած թանգարան—գրադարանը, որ 1919ին նուիրուած է Հայաստանի, բայց փոխադրութիւնը կարելի չէ եղած վերեւ յիշուած պատճառներու 1922ին երեւան բերուեցան բոլոր իրերը եւ սկսան կարգաւորման: Թանգարանը հետզհետէ ճոխացաւ, ընդունելով նախիջեւանի հայկական թանգարանը, Մոսկուայի մէջ հաւաքուած իւղաներկ պատկերները: Թանգարանը բացուեցաւ 1922 Նոյմ. 7ին: Թանգարանը ունի հնագիտական, ազգագրական, հին պատմական, գեղարուեստական, յեղափոխական եւ արշիւային բաժիններ: Ունի 800 ձեռագիր, որոնց մէջ նշանաւոր են պարսկերէն Շահնամէ մը, նուէր Հրաչեայ Ա. ճառեանէ, ձեռագիր Աւետարան մը՝ Տաթեւէն ստացուած:

Պատմական բաժնին մէջ կան 3000 իրեղէններ, Հայաստանի զանազան կողմերէն կը հաւաքուին պատմական, հնագիտական եւ ազգագրական բոլոր իրեղէնները:

*Էջմիածնի Գիտական Հաստատութիւն.*— Այս հաստատութիւնը ունի երկու բաժին՝ Մատենադարան եւ Թանգարան: Մատենադարանը ունի ձեռագիրներու բաժին, 1741 գրչագրերով եւ արշիւներով. ապա՝ տպագրուած բաժին, որմէ 1923—24 տարին գործածուած են 1820 հա-

յերէն, 1574 ուսերէն եւ 208 ուրիշ լեզուներով, ընդամենը 3602 գիրք: Հոս փոխադրուած են 1914ին Մոսկուա տարուած եւ 1922ին վերադարձուած ձեռագիրները. կազմուած է հայ օրացոյցերու հաւաքածոյ մը: Այս մատենադարանը կոչուած է Հայաստանի եւ ամբողջ Մերձաւոր Արեւելքի ուսումնասիրութեան օժանդակող լիակատար մասնագիտական հիմնարկութիւն մը ըլլալու:

Թանգարանը Էջմիածնի նախկին վանական թանգարանն է, որ պետականացաւ եւ սկսաւ դասաւորուիլ: Ճոխացնելու համար ձեռնարկուած է շրջակայ վտանգուած հնութիւնները ցուցակագրելու: Մեծ մասով Տրդ դարէն մնացած 30 ճարտարապետական հնութիւններ ուշադրութիւն գրաւած են եւ անոնցմէ ոմանք արդէն փոխադրուած են թանգարան: Արձանագրական հնութիւններ գտնելու համար խուզարկուած են Հայաստանի հնագիտական գրականութեան անծանօթ Փերսի եւ Գլավուրգայա նախահայկական բերդաքաղաքի աւերակներու շուրջը: Թանգարանը նոյնպէս ձեռնարկեց Հռիփսիմի մօտը քաղաքապարիսպ մը բանալու. այս դեռ կիսատ աշխատանքը երեւան բերաւ որ Զուարթնոցի շրջակայքը նախնական ժամանակներուն բնակութիւն կար: Թանգարանին դրամագիտական ժողովածուն զարգացնելու համար ձեռք բերուած են 67 կտոր Պարթեւական, Մասանական, Հոովմէական, Հայկական եւն. հին դրամներ:

*Պեսակաւ Թատրոն.*— Պետական թատրոնի աշխատւորները կը բաղկանան 24 դերասաններէ եւ 27 վարչական պաշտօնեաներէ: Առաջինները ամսական կը ստանան 80-35 ըուպլի. իսկ երկրորդները՝ 50-12 ըուպլի: 1922-23 տարեշրջանին, թատրոնը տուած է 34 ներկայացում եւ խաղացած է 22 բիէսներ, *Դասուսաւն*, *Յեղափոխական Հար-*



ասիի, Անիզոնե, Բունի Անուսնորին, Տօն Ժուան,  
Սասանայի Աշակերսը, Միսնու, Յուլիսի 14ր, Օթեղո,  
Վենեշիկի Վաճառականը, Երկու Տիրոջ Ծառայ, Մուն-  
նա Վաննա, Ռոսիեյ Ակոսա, Գնյունի Զանդա, Հիև  
Աստածներ, Գիև, Տրիդրի, Անյայս Կիև, Յոյսի Կո-  
ծանում, Զրատյոյ Զանգ, Ասագակներ, Կօրա:

Թատրոնը իր գիներով շատ մատչելի եղած է ժողո-  
վուրդին եւ ձրի տոմսեր տրուած են դպրոցական, զինուո-  
րական ուսանողներու: Այս շրջանը փակուած է Ապրիլ 3ին  
եւ խումբը 10 ներկայացում տուած է Լէնինականի մէջ:

1923-24ի թատերական սեզոնի համար Թիֆլիսէն  
հրահրուեցան Հայ Արուեստի Տան թատրոնի ղեկիւսէօր  
Բորջալեանը եւ Քէփէնէկեանը, որոնք պետական թատրոնի  
վարիչ Գեորգինի եւ ղեկիւսէօր Բալանթարեանի հետ մշա-  
կեցին յիշեալ սեզոնի ծրագիրն ու ղեքէրթուարը: Այս  
ընթացքները հաստատուեցաւ յատուկ Յանձնաժողովի  
մը կողմէ, որու մէջ էին Կոմիսար Ա. Մուսան եւ ընկեր-  
ներ Ա. Յովհաննէսեան եւ Ա. Կարինեան: Այս ղեքէր-  
թուառին մէջ եղան 3 հայկական հեղինակութիւն, 2  
Ռուսական քլասիկ թարգմանութիւն, 2 Եւրոպական քլա-  
սիկ թարգմանութիւն, 5 յեղափոխական եւ 2 մանկական:  
1923-24 տարուան մէջ շինուած են ու նորոգուած թատ-  
րոնին զանազան մասերը:

## ԱՐՇԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Լուսաւորութեան ժողովրդային Կոմիսարութեան են-  
թակայ վարչութիւններէն մին ալ Արհեստագիտական Լու-  
սաւորութեան Դիւանար Վարչութիւնն է, որու պարտակա-  
նութիւնն է աշակցիլ եւ մղում տալ երկրին մէջ մասնա-  
գիտութիւններու զարգացման:

Մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը, այս ուղղու-  
թեամբ պետական ոչ մէկ աշխատանք չէր թափուած:

Խորհրդային կառավարութեան գլխարկ սկզբունքներէն  
մէկն ալ գիտութիւնը գործնականացնել է, այսինքն կապել  
զայն երկրին արդիւնաբերական արտադրողական ղրութեան.  
այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր երկիրը  
պատել արհեստագիտական ցանցով մը. բայց նիւթական մի-  
ջոցներու չգոյութիւնը կ'արգիլէր վարչութիւնը իրականա-  
ցնելու ծրագիրը. միւս կողմէ գործը իր սկզբնաւորու-  
թեան մէջ պէտք ունէր որոշ փորձառութիւններու:

Այս ուղղութեամբ եղած աշխատութիւններու մէջ ու-  
շագրաւ են՝

1. Մասնագիտական Դասընթացքները, որոնք սկսան  
1922 թուականին, երկու բաժանումներ ունին, մին ելեք-  
տրաթէքնիքական եւ միւրը՝ շինարարական: Դպրոցը ա-  
ռաջին տարին 125 օրուան տեսողութիւն ունեցած է, եւ  
70 աշակերտ:

2. Երեւանի Մասնագիտական Վարժարանը (Տէխնի-  
կում), որ բացուած է 1924 թուին, առաջին տարին ու-



նեցած է մէկ կարգ 45 աշակերտով: Էրկրորդ տարին այս դպրոցին միացան Երեւանի Բ. աստիճանի դպրոցին Բ. եւ Գ. կարգերը, որով աշակերտներու թիւը եղաւ 141: Գպրոցը պէտք է ունենայ երկու բաժանում. 1) շինարարական, 2) մեքենագիտական: Նկատի ունենալով որ աշակերտներու մտաւոր մակարդակը պէտք եղած աստիճանէն աւելի ցած էր, ուստի առաջին երկու դասարաններու մէջ պէտք եղած էր Բ. աստիճանի ուսուցչամը անցնել: Պէտք կ'այ ըսելու որ այս դպրոցն ալ իր բնականոն ընթացքը շարունակելու համար միշտ նեղուեցաւ շէնքի եւ գիտական գործիքներու պակասէն: Ուսուցչական խումբը բաղկացած է 15 անձերէ, որոնց 1-ը բարձրագոյն կրթութիւն ունի: Գաղափար մը տալու համար տրուած ուսման մասին, հոս կը դնենք մասնագիտական դասերը, զանց առնելով ընդհանուր զարգացման նպաստող դասերը. —

	Ա. Դաս	Բ. Դաս
Ծրագրային ներկրաչափութիւն	—	2
Գծագիտական „	2	—
Գծագրութեան թէքնիք	—	2
Նկարչութիւն	3	5
Թէօրիք մեքենագիտութիւն	—	2
Առաղձագործարանի աշխատանք	6	6
	11	15

Նման դպրոց մըն ալ բացուած է Լէնինականի մէջ: Միայն թէ Լէնինականի մասնագիտական վարժարանը ունի նաեւ գիւղատնտեսական բաժին մը:

Գիւղատնտեսութիւնը զարգացնելու եւ ժողովրդականացնելու համար Օշականի մէջ բացուած է նաեւ Գիւղա-

տնտեսական մասնագիտական վարժարան 1922ին: Այս դպրոցէն աւարտականները պիտի ըլլային շրջանին հրահանգիչները եւ մասնագիտական աշխատաւորները: Թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական պայմանները (գիւղատնտեսներ չէին ցանկար Օշական երթալ դպրոցին մէջ դասախօսելու) պատճառ եղաւ որ այս մասնագիտարանը կարելի չըլլայ դնել իր դերին մէջ եւ այս տարի որոշուեցաւ անիկա վերածել եռամսեայ շրջան ունեցող գիւղատնտեսական վարժարանի:

Այս հաստատութիւններէն զատ, թէ՛ պետական եւ թէ՛ Նպաստամատոյցի որբանոցներու մէջ պատասպարուած որբերուն եւ որբուհիներուն համար կան ձեռարուեստի, կողովագործութեան, կօշկակարութեան, կարուձեւի, կազմարարական եւ կեդրոնա՛յան դպրոց—արհեստանոց, որոնց մէջ բազմաթիւ աշակերտներ գործնական կերպով կը սորվին արհեստ մը, իրենց օրապահի՛ը կարենալ ճարելու համար:

Արուեստի վերաբերեալ մասնագիտութիւններու շարքին մէջ կարելի է յիշել Երաժշտանոցը, որ հիմնուած է 1921ին եւ ունեցած է երկու բաժանում. միոյն մէջ պատրաստուած են ուսուցիչներ՝ երաժշտութիւնը ժողովուրդին մէջ տարածելու համար. իսկ միւսը ակադեմիական բաժին է, որ կ'աշխատի մարզուած երաժիշտներ հասցնել:

Անցեալ տարի աշակերտներու ընդհանուր թիւն էր 124, իսկ ուսուցիչներունը՝ 9, որոնք շաբաթական 18 ժամ դասախօսութիւն ըրած են: Այս տարի Երաժշտանոցը վերածուած է Հայաստանի Գծաւերվաթուառի:

Կայ նաեւ Գեղարուեստական Թէքնիքական Գպրոց, որու նպատակն է Գեղարուեստը մտցնել արտադրութեան մէջ եւ պատրաստել տեսական ու գործնական գեղարուեստագէտներ:



Անցեալ տարի, դպրոցը ունէր նկարչական հինգ խումբեր, գունանկարչական 4, քանդակագործական 4, ոսկերչական 4, բրուտային 2, դասախօսութիւններ 2 եւ ոսկերչական նկարչական 3, ընդամենը 23 խումբեր: Աշակրտներու ընդհանուր թիւն է 170, որոնց 136ը տղայ եւ 34ը աղջիկ: Աշակերտներու 166ը հայ են, 1ը ռուս եւ 3ը թուրք:

Մասնագիտական ուսում տուող հաստատութիւններու մէջ իր արժանի տեղը կը գրաւէ Երեւանի Պետական Համալսարանը: Այս հաստատութիւնը, որ հիմնուած է 1921ին, Երեւանի Ժողովրդական Համալսարան անունով, ոչ արդիւնք է բարձրագոյն մտաւորականներ հասցնելու փառասէր ցանկութեան եւ ոչ ալ կը ձգտի տեսաբաններ տալ աշխարհի: Խորհրդային կարգերու մէջ ամէն ինչ պէտք է բղխի իրական պահանջէ մը եւ ամէն ինչ պէտք է ծառայէ իր համապատասխան պահանջին: Եւ պատակը աշխատանքութիւնն է, ամէն ինչ պէտք է ձգտի աշխատանքութեան երջանկութեան: Եւ իրապէս Համալսարանի հիմնարկէքը եւ իր քանի մը տարուան զարգացման շատ կարճ պատմութիւնը ցոյց կու տան որ Համալսարանը կը յառաջդիմէ այնքան միայն, որքան անհրաժեշտութիւն ցոյց կու տայ երկրին մտաւորական արդիւնաբերական կեանքը:

Մինչեւ անցեալ տարի, Համալսարանի նպատակն էր տալ բանուոր եւ զիւղացի տարրին հասարակագիտական եւ բնագիտական գիտելիքներ. բայց երկրին մէջ օրէ օր կը զարգանար մտաւորական եւ արդիւնաբերական կեանքը: Միջնակարգ ուսումի տէր աշակերտութիւնը կ'սկսի գրաւել նստաբաններու մեծագոյն մասը. միւս կողմէ արդիւնաբերական կեանքը կը մտնէ իր բնականոն ճամբուն մէջ: Կը սկսին օգտագործել հոսող ջուրերու ելեքտրականութիւնը Կը հիմնուին զանազան ելեքտրակայաններ, պէտք կը

զգացուի ճամբաներու շինութեան եւ այս բոլորին համար անհրաժեշտ կը դառնան գիտականօրէն պատրաստուած որոշ մասնագէտներ: Այս պակասը լրացնելու համար 1922 — 23 դպրոցական տարին, Համալսարանը կը մտնէ նոր շրջանի մը մէջ եւ կը կոչուի Երեւանի Պետական Համալսարան: Իր նախկին երեք ֆաքիւլթէներուն վրայ կ'աւելնայ երկուք եւս, որով այսօր Համալսարանը կը բաղկանայ 5 ֆաքիւլթէներէ, — զիւղատնտեսական, թէքնիքական, պատմագրական, հասարակագիտական եւ բժշկական: Համալսարանին կից կը հիմնուին կազմախօսական, քիմիական, ֆիզիքական, հանքաբանական աշխատանոցներ, հիւսուածաբանական եւ բնախօսական սենեակներ, բնախօսական եւ հնախօսական թանգարաններ, թէքնիքական արհեստանոցը եւ գրադարան:

Պատմագրական եւ հասարակագիտական ֆաքիւլթէներուն մէջ մասնագիտօրէն կ'ուսուցուին մանկավարժութիւն, իրաւագիտութիւն եւ տնտեսագիտութիւն:

Թէքնիքական ֆաքիւլթէի մէջ առանձնապէս կը շեշտուի ջրաբաշխական եւ շինարարական արուեստը:

Գիւղատնտեսական ֆաքիւլթէին մէջ կան կենսաբանական, բուսաբանական եւ հանքաբանական սենեակներ: Պատմագրական ֆաքիւլթէին կից կան հնագիտական աշխատանոց եւ հնագիտական լուսանկարչութիւն:

Բժշկական ֆաքիւլթէին կից կան բնախօսութեան, լազմախօսութեան եւ հիւսուածաբանութեան սենեակներ:

Համալսարանը ունի մօտ 50,000 գիրքեր:

Համալսարանի զանազան ֆաքիւլթէները մտնելու հար այս տարի խնդրագիր տրուած է 505 անձերու կողմէ: Համալսարանին մէջ դասախօսելու կոչուած են այնինի ուժեր, որոնք արդէն իրենց արժանի տեղը գրաւած են ուրիշ համալսարաններու ակադեմիկոսներու վրայ:





7/

2013

4482  
« Ազգային գրադարան  
NL0038427





